իրանց կրակոտ զօրութիւնը: Քա՛ղցր էր շնչել լեռնային օդը, տոգորուած ծաղիկների անուշահոտութեամբ: Անցնելով ամէն մի բլուրից, ամէն մի հովիտից, իմ առջեւ բացւում էր մի նոր տեսարան, այնքան հիանալի, այնքան յափշտակիչ, որպէս մի գեղեցիկ պատկեր իր հրաշալի արհեստագործութեամբ: Ուր եւ նայում ես, լեռնային երկրի կանաչ մակերեւոյթը ծածկուած է բարձր եւ դալար խոտերով, նրանց միջից վառւում են ծաղիկների հազարաւոր տեսակներն իրանց հրապուրիչ պայծառութեամբ: Տեղ-տեղ խուլ մրմունջով վազում են վտակներ, ամօթխածաբար թաքնուած խոտերի մէջ, երբեմն նրանք նազելով ցոյց են տալիս իրանց արծաթափայլ երեսիկները, եւ կրկին ժպտելով ծածկւում են խիտ եղէգնաբոյսերի մէջ: Փոքրիկ ջրային ծտերը միայն ուրախ-ուրախ սաւառնում են նոյն վտակների վրայ, եւ անդադար վերուվայր թռչկոտելով, դիպցնում են իրանց կուրծքը բիւրեղային մակերեւոյթին, խլելով ալիքների միջից մի անբախտ միջատ, որ տարւում էր անխնայ հոսանքի հետ...:

Աչքս ես դարձնում եմ դէպի Դուշմանայ ձորը, եւ ահա՛ մերկ քարաժայռի գագաթին դեռ կանգնած են կիսակործան աշտարակները մի հին ամրոցի: Աշտարակներից մէկի ատամնաւոր վերնապարիսպի գլխին միայնակ նստած է ահագին սեւ արծիւը եւ լուռ մտախոհութեամբ նայում է դէպի խորին անդունդը, որ բացուած է նրա առջեւ: Նա նստած է անշարժ եւ վեհափառ կերպով, եւ նրա սրատես աչքերը որոնում են ձորի մթին խորութեան մէջ ցանկալի որսը...

Եւ ակամայ յիշում ես հին աւանդութիւնը՝ արդեօք նա չէ՞ր մի ժամանակ այդ աւերակների տիրապետող հսկան, որ չար կախարդի դիւթելով արծոի կերպարանք ստացաւ, որ ճնշում էր իր բռնութեան ներքոյ ամէն կենդանութիւն, որ ուր եւ գնում էր, իր ետեւից թողնում էր անապատ եւ ամայութիւն...: Նոյն աշտարակի բարձրութիւնից, ուր այժմ նստած էր արծիւը, ամէն առաւօտ մի զոհ գլորւում էր դէպի խորն անդունդը... մի զո՛հ, որից նոյն գիշեր խլել էր ամրոցի իշխանը նրա կուսական անմեղութիւնը...

Այսպէս, յափշտակուած երբեմն բնութեան գեղեցկութիւններով եւ երբեմն հին աւանդութիւնների յիշողութեամբ, շարունակում էի իմ գնացքը: Իսկ բոլոր տպաւորութիւնները հետզհետէ անյայտանում էին, ես ընկնում էի իմ կախարդական ինքնամոռացութեան մէջ: Բայց մի բան մոռանալ կարող չէի, մի տպաւորութիւն մնում էր իմ մտքում անջնջելի, — այն էր Մարօի գեղեցիկ պատկերը:

Բայց միթէ՞ նրա մէջ սիրտ կար, ջե՛րմ եւ սիրող սիրտ, միթէ՞ նա զգում էր, թէ ինչ բան է սէրը...: Ոչ, նա այդ չէր զգում, նրա հոգու սրբարանի մէջ եր-